և խօսելով ժողովուրդն ասոնց հեշտօրէն, և ոմանք հետաքրքրութեամբ ունկն կը մատուցանէին.

Այս տեսարանին յաջորդեց երկրորդ մը.

Կարապետ, Ոլթանաս և յետոյ Ցարութիւն պատանիները. որք քաղաքական մի քանի խնդիրներու վրայ համառօտակի տեսութիւն մ' ընելով, առաջին և վերջին աշակերտներու եռանդուն վիճաբանութիւնն հանդիսականաց մէջը գրգիռ և ծափահարութիւնն շատցուց . . . . ,

Կատարինէ Մալխասեան. 14 տարեկան հասակ մ' որ նոր կը դառնար ոչ Հայ դպրոցէն Հայոց դպրոցը՝ խանդով մ' սկսաւ մեծին Վարդանայ դժբաղդ Հուշանիկին բանաստեղծախառն պատմութիւնն և արտասուքով մ' վերջացուց. Հանդիսականներն վայրկենական այն մելամաղձոտ վիճակէն չգիտեմ ինչպէս փութով ուշաբերեցան այն պահուն և երկիցս ծափահարելով պատուեցին այս զգայուն ծաղկէ հասակը. Այս ճառախօսութեանց և դրամաներու կընդմիջէին մերթ ազգային երգեր. և Պ. Ծերուն հոգաբարձուի ուսեալ կատարինէ օրիորդի ճարտար և գիւթիչ դաշնակահարութիւնն հանդիսին վրայ երկնային զմայլում մ' կը սրսկէր.

Ա–էփէ Վայանյեան Վանյէ

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ.

Ինչպէս այլ և այլ պարագաներու մէջ միշտ յայտնած է Ագքիրմանի Հայ հասարակութիւնը իւր զգացմունքը՝ նոյնպէս և յսկզբան ամսոյս իւր ցրտացեալ երակներու մէջ նոր արիւն հայութեան նորոգելով, հանդէս կկազմէր զիմաւորել իւր սիրելի և արժանընտիր հովիւ Գեր. Տ. Մակար Սրբազանին. Դպրոցականքն եկեղեցւոյ գաւիթն ու ժողովուրդն հայոց՝ խառն օտար ազգաց հետ՝ եկեր և խռներ էին պարտիզին մէջը. Ոստիկանաց հսկողութեան ներքև միշտ կարգաւորեալ.

Մինչ նորին Սրբազնութիւնն արտաքին գաւթին դռնէն ներս կմտանէր, դպիրքն զհոգևորսն՝ և ուսանողքն ազգային երգեր երգելով՝ օդը կթնդացունէին և որտերն ամենուն ի հայրենասիրութիւն կվառէին. և օտարազգիքն իսկ գոգցես կզգածուէին հայոց այս հանդէսը դիտելով.

Զինչ ինչ որ ներշնչէին ի ժամուն ի սրբազանն, ձայնիւ արտայայտեց. քարոզ մի խօսեցաւ եկեղեցւոյ մէջ և իւր սիրալիր ողջունի ձայնը խաղաց հանուրին ականջը և որտերն ամենուն բերկրութեամբ խայտացին.

Յեկեղեցւոյ ի լսարանն այցելելով՝ սրբազանը ժամու մը չափ եւս անդ հանդիսին նախագահելով առ ինքն ուղղեալ ուղերձները լսեց. և ասոնց ի պատասխանի՝ հակիրճ և իմաստուն ատենաբանութեամբ և օրհնութեամբ մը կնքեց հանդէսը.

Քան զայս աւելի ապաւորիչ և զմայլելի բանն եղաւ Ագքիրմանցւոց համար՝ իր ծխական երկսեռ դպրոցին հոգաբարձու՝ Մեծապատիւ Ծերուն

աղա Աստուածատուրեանի 22 տարւայ կտակակատարութեան յիշատակագրին ընթերցումն և նորա արդեանց ծանուցումը.

Գեր. Առաջնորդ Հայրն՝ յետ չորից աւուրց՝ իւր այցելութիւնքն դպրոցին և այլ տեղեաց փոխադարձաբար ընելէն յետոյ՝ Երեքշաբթի երեկոյ Գ. քաղաքապետի միջոցաւ Հայ Հասարակութիւնը ի Մատենադարանն հրաւիրեց. Եկան ամենքեան և Սրբազան Հօր Նախագահութեան ներքև ժողովը կազմելով՝ սկսաւ ատենադպիրն հանգուցեալ Վ. Էքիլ Խարճեան հաճի Յովսէփի ըրած կտակը կարդալ.

Որով բարեյիշատակը 1500 րուբ. արժողութեամբ վաճառքի մը բեկորները կը թողուր Ակքիրմանի Ս. Մեսրոպեան երկսեռ դպրոցին. Եւ յիշեալ կտակագիրն կը պարունակէր իր մէջը նաև հատուած մը, որով բացարձակապէս իրաւունք կուտար իւր կտակակատար Մեծ Տէրուն աղայի, որ մինչև ցվախճան իւր՝ յինքն՝ ի Տէրուն աղա ի պահեստի պիտի մնայ կտակուած վաճառքէն գոյացած փողը, և նորա շահաբերութեան գործառութիւնքն իւր ձեռով միայն կատարուի, և այլն. Յետոյ յառաջ մատեաւ Մեծ. Տէրուն աղա և այսպիսի հաշուեցոյց մի ներկայացուց ժողովրդեան. Հաշուեցոյց մի, որով կը յայտնէր թէ՝ 1858 ին՝ ի ձեռին իւր ունեցած սոյն կտակագրոյն համեմատ հազիւ 1500 րուբ. արժողութեամբ վաճառք իրեն յանձնուած էր. (որ ամենք ի ժողովրդոց եւս վկայեցին թէ այդպէս է). և զայն մինչև ցայսօր 3700 րուբլի հասուցեր է. Եւ կը յայտարարէր նաև թէ, սոյն գումարէն գոյացած տոկոսներով դպրոցին վրայ 9000 րուբլի ծախք ընելէն յետոյ՝ 22 տարւայ միջոցին մէջ, դպրոցին ի կալուած 1500 րուբլի արժողութեամբ ալ երկու այգի գներ է.

Հուսկ յետոյ Գեր. Նախագահը ի դիմաց ժողովրդեան իւր շնորհակալութիւնը յայտնելով. առաջարկութեան վրայ ժողովուրդն եւս տուաւ իւր թաթաղուն և զեղուն շնորհակալութեան քուէն՝ իւր բազմաժամանակեայ և հաւատարիմ հոգաբարձու և կտակակատար Մեծ. Տէրուն աղա Աստուածատուրեանի.

ԽՈՐԷՆ Ս. ԱՐԾՐՈՒՆԻ

Ակքիրմանի Հայ հասարակութեան շնորհակալութեան հետ միասին յայտնումենք Մեծ. Տէրուն աղա Աստուածատուրեանցին եւ մեր խորին շնորհակալութիւնը: Կեցցէ՜ այսպիսի հոգաբարձուն, որ իւր հաւատարիմ եւ արդիւնաւոր ծառայութեամբը արժանացել է ընդհանուրի շնորհակալութեան. կեցցէ՜ եւ Ակքիրմանի Հայ հասարակութիւնը, որ գիտէ անկեղծաբար գընահատել իւր Աշխատաւորի ազգաշահ ծառայութիւնը:

* * *

Հետագայ նամակը հրատարակելով անկողմնակալութեամբ՝ կյուսամք կարեւոր տնօրէնութիւնքը շուտով տեսնել: